

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԵՋ. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ...
ԱՐՄԵՆ ՍԱՐՈՒԹՅԱՆ

Խորհրդային պատմագրության մեջ Հայկական հարցի, հայերի ցեղասպանության և Ռուսաստանի քաղաքականության վերաբերյալ հիմնահարցերում շրջանառության մեջ բավականին երկար ժամանակ դրված էին ավանդական տեսություններ: Այդ տեսություններից մեկը Ռուսաստանի դերը Հայկական հարցում և ցեղասպանության հարցում դիտում էր «*քաղաքական բարիքի*» տեսակետից: Համաձայն այս տեսության Ռուսաստանը հանդես է եկել որպես քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում հայերի, պաշտպան և հովանավոր ընդդեմ Օսմանյան կայսրության հալածող քաղաքականության՝ վերը նշված ժողովուրդների նկատմամբ: Մասնավորապես՝ Ռուսաստանն առաջինը հանդես եկավ երիտթուրքերի՝ հայերի ցեղասպանության քաղաքականության դատապարտմամբ: 1915թ. ապրիլի 26-ին Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը հեռագրեր ուղարկեց Փարիզում և Լոնդոնում դեսպաններին, հանձնարարելով նրանց դիմել ֆրանսիական և անգլիական կառավարություններին՝ համատեղ եռակողմ հայտարարության առաջարկությամբ, որում հայերի ջարդերի ողջ պատասխանատվությունը պետք է դրվեր Թուրքիայի նախարարների խորհրդի բոլոր անդամների, ինչպես նաև բոլոր այն քաղաքացիական և ռազմական պաշտոնատար անձանց վրա, որոնք առնչություն ունեին այդ դեպքերին:¹

Բացի դա, զուգահեռաբար ջանքեր էին գործադրվում հայ ժողովրդի փրկության նպատակով չեզոք պետությունների օգնությամբ թուրքական կառավարության վրա ներգործելու ուղղությամբ: Ընդ որում՝ չեզոք պետությունների ներգրավումը Ռուսաստանը դիտում էր ոչ թե որպես Անտանտի պետությունների եռակողմ հայտարարության այլընտրանք, այլ դրան լրացնող միջոց:² Մյուս կողմից՝ հայկական եղևնի տարիներին հայերի կոտորածը կանխվում էր այն չափով, որ չափով ռուսական բանակն իր առաջխաղացման ճանապարհին զրավում էր այս կամ այն հայկական բնակավայրը, շրջանը և այլն:³ Չժխտելով այն հանգամանքը, որ այս տեսության մեջ առկա են բավականին շատ ռացիոնալ պահեր, չենք կարող չնշել նաև, որ այն որոշակիորեն չափազանցեցնում է Ռուսաստանի դրական գործոնը, ինչը, ինքնին, ծայրահեղություն է:

Մրան զուգահեռ խորհրդային պատմագրության մեջ զարգանում էր մեկ այլ տեսություն, որը Ռուսաստանի քաղաքականությունը, մասնավորապես՝ ցեղասպանության հարցում, դիտարկում էր «չարյաց փորձագույճի» դիրքերից: Այս տեսությունը չէր ժխտում, որ Ռուսաստանը որոշակի դրակալն դեռ է իսրայելցի ցեղասպանության դատապարտման և հայերի փրկության հարցում, սակայն նշվում էր, որ այդ քայլերը նա կատարել է ելարտասին գործերի նախարար Սազոնովը կատարվող լայնածավալ հարկավոր զեկուցագրում գրում էր. «Եթե գերմանացիներին ու թուրքերին հարկավոր էր Հայաստանն առանց հայերի, եթե նրանք կամենում էին ոչնչացնել մեր տանի խնդիրն է՝ վերականգնել ինչպես էլ որ լինի այդ հայկական սեպը, այդ արգելքը թուրքերի ու քրդերի և մեր թաթարների միջև: Հայ բնակչության պահպանումը անհետաձգելի խնդիր է»:⁴ Այսպիսով ակնհայտորեն ընդգծված է ամենակարևոր պատճառներից մեկը, որով և առաջնորդվում էր Ռուսաստանը իր քաղաքականության մեջ՝ ցեղասպանության հարցում:

Այս պատճառն, անշուշտ, կարևոր էր, սակայն կար առավել կարևոր մի պատճառ, որից բխում էին մյուս բոլոր ենթապատճառները: 1914-1918թթ. պատերազմի նախօրեին և սկզբին Ռուսաստանում նկատվեց և հետագայում պաշտոնական ռազմական քաղաքականության ղոկտրինի կարգավիճակ ստացավ մի միտում, որն իր հետքը թողեց Թուրքիայի հետ Ռուսաստանի երաբերությունների համակարգում, դրանից բխող բոլոր հետևանքներով: Խոսքը վերաբերում է Ռուսաստանի ավանդական՝ բյուզանդական միսիայի (Ռուսաստանի նպատակամետ քաղաքականությանը՝ Բոսֆոր-Ղարղանեյին և Կոնստանդնուպոլսին տիրապետելու համար) շարունակությանը, որն անդրադարձավ Հայկական հարցին, և հենց հայկական գործոնին էր վերապահված սկզբունքային դերը այս քաղաքական միսիայի զարգացման և իրագործման հարցում երկու հակամարտող կողմերի՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև:⁵ Այսպիսով ստացվում է, որ հայերին պաշտպանելու և հովանավորելու քաղաքականությունը, հատկապես Յեղասպանության ժամանակ, նպատակ ուներ Հայկական հարցի միջոցով հասնել Ռուսաստանի բաղձալի երազանքին՝ Բոսֆոր և Ղարղանեյ նեղուցներին տիրելուն: Հայաստանն իր աշխարհագրական դիրքով հնարավորություն էր տալիս ոչ միայն տիրապետություն հաստատել ողջ Անատոլիայի վրա, որտեղից հետանկարներ էին բացվում Փոքր Ասիայի այլ մասերում հաստատվելու և դրանով իսկ դեպի Միջագետք ելք ունենալու համար: Փաստորեն՝ ռուսական իմպերիալիզմի տեսակետից Արևմտյան Հայաստանի գրավումը առաջին քայլն էր Փոքր Ասիայում հետագա նվաճումների ճանապարհին:⁶ Ասել կուզի՝ Հայկական հարցը Ռուսաստանի համար ոչ թե նպատակ էր, այլ միջոց, Արևմտյան Հայաստանի խնդիրը մի «բանալի» էր, որով Ռուսաստանը ցանկանում էր քացել Բոսֆոր և Ղարղանեյ նեղուցների ու Կոնստանդնուպոլսի «դռները»:

Անդրադառնալով այս տեսությանը, բազմաթիվ հայ գիտնականներ իրենց հերքին դատապարտում էին Ռուսաստանի վարած քաղաքականությունը Հայկական հարցում, մասնավորապես՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Սակայն այս պարագայում խնդրին չի կարելի մոտենալ զգացմունքային դիրքերից, այլ պետք է այն քննել քաղաքական շահերի տեսակետից: Քաղաքականությունը մերժում է զգացմունք-

ների գործոնը, առավել ևս աշխարհաքաղաքական նշանակություն ունեցող հարցերի վճռման կամ լուծման ժամանակ: Այն, որ Ռուսաստանը, պաշտպանելով կամ հովանավորելով հայերին, առաջին հերթին հետապնդում էր իր քաղաքական շահերը՝ ճշմարիտ է և օբյեկտիվ, քանզի քաղաքականության մեջ ոչ մի պետություն ոչինչ չի անում հանուն այլ պետությունների կամ ժողովուրդների, առավել ևս պատերազմ չի հայտարարում որևէ երկրի, եթե սա չի բխում իր պետական շահերից: Այս իմաստով Ռուսաստանի քաղաքականությունը պետք է գնահատել բնական: Վերջին հաշվով հայ ժողովուրդը ևս, երբ ինքնավարություն էր պահանջում Ռուսաստանից Արևմտյան Հայաստանի համար, ելնում էր իր ազգային շահերից, այլ ոչ թե Ռուսաստանի: Թերևս հենց դա էր պատճառներից մեկը, որ Ռուսաստանն ամեն կերպ ձգձգում էր ինքնավարության հարցի լուծումը այն պարզ պատճառով, որ չէր ցանկանում, որ Բոսֆոր-Ղարդաանեյի և Կոստանդնուպոլսի դռների «բանալին» լինի հայերի ձեռքում: Բոսֆոր-Ղարդաանեյը և Կոստանդնուպոլսը չէին կարող լինել «անկլավային» վիճակում, Ռուսաստանից կտրված և, համաձայն մշակված դոկտրինի, դրանց ցամաքային կապը Ռուսաստանի հետ պետք է լիներ Արևմտյան Հայաստանը, որը, միանշանակ, պետք է լիներ Ռուսաստանի վերահսկողության և տիրապետության տակ: Ահա՛ դարասկզբի հայ քաղաքական և հասարակական գործիչների պատկերացումներում Ռուսաստանի՝ իր սեփական շահերի գերապատվության փաստի գիտակցման բացակայությունն էր թերևս Ռուսաստանի պետական այրերի հետ բանակցություններում նրանց մի շարք սխալների առիթը: Այդ նույն զգացմունքայնությունից մենք չենք կարողանում ձեռքազատվել նաև մեր օրերում, երբ քննարկում ենք Ռուսաստանի վարած քաղաքականությունը Առաջին աշխարհամարտի տարիներին:

Այս երկրորդ տեսության հետ սերտորեն առնչվում է հիմնականում սփյուռքահայության շրջանում առաջ եկած և հետագայում մեզանում տարածում գտած այսպես կոչված «բացարձակ չարիքի» տեսությունը: Համաձայն այս տեսության Ռուսաստանն իր քայլերը կատարելիս ոչ միայն, առաջին հերթին, առաջնորդվում էր իր պետական շահերով, այլև նրա քաղաքականությունը, ընդհանրապես, հակահայկական էր ու միանշանակ ուղղված էր հայերի դեմ: Ավելին՝ ըստ այդ տեսության Ռուսաստանն իր քայլերով նպաստել է ցեղասպանության իրագործմանը, քանզի Ռուսաստանը «զրզոեց» և «ստիպեց» թուրքերին կոտորել հայերին, երբ 1914թ. հունվարի 26-ին կնքվեց ռուս-թուրքական համաձայնագիրը Արևմտյան Հայաստանում քարեփոխումներ կատարելու մասին: Նշենք, որ այս տեսակետն արմատապես սխալ է, քանի որ, ինչպես հայտնի է, հայերն են խնդրել Ռուսաստանին ստիպել Թուրքիային բարեփոխումներ կատարել Արևմտյան Հայաստանում⁷ և, բացի դա, հայերի բնաջնջման ծրագրերը երիտթուրքերը մշակել էին ավելի վաղ, իսկ Ռուսաստանի միջամտությունը Արևմտյան Հայաստանում անցկացվելիք բարեփոխումների հարցում ոչ թե պատճառ էր հայերի ցեղասպանության, այլ, ընդամենը, պատրվակ, որով երիտթուրքերը փորձում էին «արդարացնել» իրենց վայրագությունները: Այս իմաստով 1914թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրն ավելի ճիշտ է դիտարկել վերևում մշված «չարյաց փոքրագույնի» տեսության շրջանակներում, քանի որ տվյալ դեպքում Ռուսաստանը հոգ էր տանում հայերի մասին, ելնելով իր քաղաքական շահերից. համաձայնագիրը

հարմար առիթ էր Թուրքիայի վրա ճնշում գործադրելու և նրա ներքին գործերին միջամտելու համար՝ հայերի իրավունքների և քարեփոխումների պաշտպանության տակ: «Բացարձակ չարիքի» տեսությամ մեջ տեղ են գտել նաև այլ փաստարկներ, որոնք ակնհայտ մեղադրանքներ են Ռուսաստանի հասցեին:

Կամզ առնենք այն մեղադրանքների վրա, որոնք առավել լուրջ են և կարևոր:

1. Մ. Արզումանյանն իր աշխատության մեջ հետևյալ տեսակետն է արտահայտում. «Ռուսական բանակի հանկարծակի մահանջն իր հետ բերեց գրավված վայրերի հայ բնակչության աղետաբեր և խուճապային զաղթ դեպի Կովկաս: Գաղթում էր շուրջ 150 000 հոգի, որին հիմնականում կան բանակի մահանջի անմիջական հետևանքները: Ռուսապաշտպանում էին հայ փոքրաթիվ կամավորական ջոկատները: Իհարկե, չի կարելի դա համարել կանխամտածված գործողություն, բայց կասկածից վեր է ռուսական ռեակցիոն հրամանատարության հանցագործ անտարբերությունը դեպի հայ բնակչությունը, որը նույնիսկ չզգուշացվեց»:՝ Մ. Արզումանյանը, նկատի ունի Վանի դեպքերը, երբ ռազմական հետախուզության սխալ տվյալների հետևանքով ուռճացվել էր թուրքական ուժերի թվաքանակը և դա պատճառ էր հանդիսացել կոստորածի: Ինչպես նշում է Ա. Եսայանը. «Հայերի կոտորածը սաստկանում էր այն վայրերում, որտեղից ռուսական բանակը, պատերազմական հանգամանքների թելադրանքով, մահանջում էր, իսկ հայ բնակչությունը միշտ չէ, որ տեղյակ էր լինում մահանջին և չէր հասցնում շարժվել նրա հետ միասին»:՝ Իհարկե երկու հեղինակներն էլ ժխտում են այս մահանջի կանխամտածված և դիտավորյալ լինելու համգամանքը: Այս հարցի պարզաբանմանն անդրադարձել է նաև Ջ. Կիրակոսյանն իր աշխատության մեջ, որտեղ բերում է ռուս զենքերալ Կուլեբյակիին դատողություններն այս հարցի վերաբերյալ: «Կուլեբյակինը գտնում էր, որ անհրաժեշտ էր հուսալի միջոցներով և ուղիներով ամեն կերպ ամրացնել արդեն ազատագրված տարածքները, այլ ոչ թե կատարել սրընթաց մանյովրներ, որոնք անբավարար մախապատրաստված լինելու պատճառով հաճախ նույն արագության վերածվում էին մահանջի, բախտի քմահաճույքին թողնելով հայ բնակչությանը, որը չէր հասցնում մահանջել ռուսական զորքերի հետ: Իսկ մահանջող ռուսական բանակից հետո հայտնվում էր կատաղած թշնամին, որն ամենաբարբարոս ձևով հաշվեհարդար էր տեսնում բոլոր նրանց հետ, ով չէր հասցրել հեռանալ: Կուլեբյակինը գտնում էր, որ ռուս հրամանատարությունը պետք է այս ամենը մախոթող հաշվի առներ, քանի որ այդ ամենի համար ուներ բոլոր ավյալները»:՝ Ինչպես երևում է Կուլեբյակիինի դատողություններից, նա ակնարկում է որոշ ռուս հրամանատարների ապաշնորհության, վատ կազմակերպվածության մասին, որը բնորոշ էր Կովկասյան ճակատին, ընդհանրապես: Ասել կուզի՝ մահանջները սուբյեկտիվորեն և միտումնավոր ուղղված չեն եղել հայ ազգաբնակչության դեմ, այլ ռուսական հրամանատարության ոչ ճիշտ մարտավարության, անկազմակերպվածության, անվերահսկելիության հետևանքով օբյեկտիվորեն հանգեցրել են թշնամու կողմից հայ ազգաբնակչությունից ռուսների հաջողությունների համար վրեժ-խնդիր լինելուն:

2. Ռուսաստանին մեղադրում են մաև փախստականների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքի, ավելին՝ նրանց հայրենիք վերադառնալու համար արգելքներ սահմանելու մեջ և սրա հետ անմիջականորեն կապված՝ Արևմտյան Հայաստանը կազակներով բնակեցնելու փորձերի մեջ: Այս կապակցությամբ Ջ. Կիրակոսյանը գրում է. «Ինչ վերաբերում է հայ գյուղացի-փախստականների հողերի, իսկ քաղաքներում բանակի կողմից զբաղեցրած տների և խանութների վերադարձին հայ սեփականատերերին, ապա ցարական իշխանությունները մեծ բարդություններ էին հարուցում այս հարցում: Արգելված էր հայերի մուտքը Էրզրում: Շուտով զեներալ Յուդենիչը կարգադրություն արեց Ալաշկերտի, Բայազետի և Դիադինի դաշտավայրերից եկող բնակչության կողմից բնակվելու արգելման մասին, բացառությամբ վերաբնակիչների և կազակների: Իսկ բողոքներն այս հարցի կապակցությամբ մնում էին անհետևանք»: ¹¹ Թե ինչու էին այդպես վարվում ցարական իշխանությունները, պարզ երևում է գեներալ Յուդենիչի կողմից Վրոնցով-Դաշկովին 1915թ. ապրիլի 5-ի գեկուցումից, որտեղ նշված է. «Հայերի գաղթած հողերը պատերազմից հետո դժվար կլինե՞ր ետ վերցնել, կամ թե ապացուցել, որ զավթածն իրենց չի պատկանում, որի օրինակ է հանդիսանում հայերի զավթածը ռուս-թուրքական պատերազմից հետո»: ¹² Ի սկզբանե նշենք, որ Յուդենիչը միտումնավոր աղավաղել է փաստերը՝ հայերը ոչ թե զավթել կամ փորձել են զավթել ինչ-որ հողեր, այլ ընդամենը ցանկացել են տեղ կանգնել իրենց ունեցվածքին: Վերևում արդեն նշել ենք, որ Արևմտյան Հայաստանը Ռուսաստանի համար ունեցել է ռազմավարական նշանակություն՝ որպես Բոսֆոր-Դարդանեղի ու Կոստանդնուպոլսի հետ նրան կապող ցամաքային օղակ և, բնականաբար, կառավարությունը չէր ցանկանում այդ օղակը հանձնել հայերի տնօրինությանը, այլ գերադասում էր այնտեղ բնակեցնել ռուս կազակների, որոնք պետք է ծառայեին այդ ցամաքային օղակի մեջ որպես սահմանապահներ: Ուստի այստեղ ոչ մի անհասկանալի բան չկա, ամեն ինչ տեղավորվում է Ռուսաստանի բաղձալի երազանքին հասնելու համար մշակված դոկտրինի շրջանակներում:

3. Ռուսաստանին ուղղված լուրջ մեղադրանքներից է մաև հայ կամավորական ջոկատների նկատմամբ ռուսական հրամանատարության և իշխանությունների ամբարշտակյալ, նույնիսկ թշնամական վերաբերմունքը: Այս դրույթը հիմնվում է մաև այն հանգամանքի վրա, որ հայ կամավորներն ի վերջո զգալիորեն հեշտացնում էին ռուսական բանակի առաջխաղացումը, իսկ փոխարենը հանդիպում էին նման վերաբերմունքի: Ի հակալշիռ այս դատողության ռուսական հրամանատարությունը բերում էր հետևյալ դրույթը, թե հայերը իրենք են առաջարկել ստեղծել կամավորական ջոկատներ, իսկ կառավարությունը թույլատրել է: Փաստն այն է, որ կամավորական ջոկատների ստեղծման համար կատարվել են երկկողմանի քայլեր թե՛ հայերի և թե՛ ռուսական իշխանությունների կողմից: Այս երևույթի վրա լույս են սփռում ռուս գեներալ Օզանովսկու դատողությունները. «Ցարական գեներալ Օզանովսկին ասում էր, որ կամավորական ջոկատների կազմալուծման ժամանակ, իրենք հետապնդել են հետևյալ նպատակը՝ պատերազմից հետո հնարավորություն ունենալ անհապաղ և արագ զինաթափել հայերին, քանի որ մտավախություն կար, որ խաղաղության կոնֆերանսի ժամանակ նրանք կարող էին ապստամբել և կոնֆերանսը ստիպված կլինե՞ր հաշվի նստել այդ փաստի հետ, որը հակասում է Ռուսաստանի շահե-

ստիպում են նորովի մոտենալ և, համապատասխանաբար, նորովի մեկնաբանել հայ ժողովրդի պատմության այդ ժամանակահատվածի պատմական դեպքերը: Այդ փաստերը և դրանցից բխող դատողությունները ցույց են տալիս, որ Առաջին աշխարհամարտի տարիներին Ռուսաստանի և հայ ժողովրդի միջև ընթացող հարաբերությունները թե՛ ցեղասպանության հետ կապված և թե՛, ընդհանրապես, Հայկական հարցի շուրջ այնքան բազմաբնույթ են և հաճախ հակասական, որ երբեմն հնարավոր չէ դրանք տեղավորել վերը նշված ավանդական տեսություններում, ուստի առաջ են գալիս նոր հայեցակարգեր, նոր լուսաբանումներ, որոնք ավելի են ամբողջականացնում վերը նշված խնդիրների պատկերը:

Երբ մենք խոսում ենք հայերի նկատմամբ Առաջին աշխարհամարտի տարիներին և հատկապես ցեղասպանության ժամանակ Ռուսաստանի քաղաքականության մասին, չպետք է մոռանալ, որ միշտ չէ, որ Հայկական հարցում Ռուսաստանն ինքնուրույն, անկախ էր իր գործողություններում և քայլերում: Պետք է նկատի ունենալ, որ Ռուսաստանը Անտանտի անդամ էր, և անընդհատ դիվանագիտական պարզաբանումներ, դիվանագիտական ճնշումներ էին իրագործվում այդ դաշինքի շրջանակներում: Ռուսաստանի մյուս երկու դաշնակիցներին՝ Անգլիային և Ֆրանսիային, այնքան էլ դուր չէր գալիս Ռուսաստանի այդչափ ակտիվացումը Հայկական հարցում՝ կապված 1914թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի հետ, որով Ռուսաստանը հայկական բարեփոխումների իրականացման նախաձեռնությունը և, ընդհանրապես, Հայկական հարցը վերցրեց իր ձեռքը: Բեռլինի կոնգրեսի նահանջից հետո սա Ռուսաստանի կողմից ռևանշ էր եվրոպական տերությունների նկատմամբ: Թերևս հարկ չկա մանրամասն ներկայացնել այն բոլոր քարոզությունները, որոնք արհեստականորեն դրվում էին Ռուսաստանի առաջ թե՛ դաշնակիցների և թե՛ հակառակորդ ռազմաքաղաքական բոլոր պետությունների կողմից և որոնք Ռուսաստանը հաղթահարեց: Անշուշտ այդ հաղթահարման ճանապարհին Ռուսաստանը չէր կարող չգնալ փոխզինումների, որի արդյունքում հայերը ստացան խոստացվածից ավելի քիչ իրավասություններ, սակայն տվյալ դեպքում կարևորը բարեփոխումների խնդիրն էր դրված առաջին հերթին և նոր միայն դրա ձևերի և դրույթների հարցերը: Այս կարգի քարոզությունների հանդիպեց Ռուսաստանը նաև Հայոց ցեղասպանության դատապարտման և դրա համար պատասխանատվության մասին եռակողմ համատեղ հայտարարության նախաձեռնման ժամանակ, 1915թ. գարնանը: Այսուհանդերձ «... Շնորհիվ Ռուսաստանի համառության՝ հայտարարության այդ քանաձևը [1915թ. մայիսի 24-ի Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի համատեղ հայտարարությունը՝ հայերի ցեղասպանության մասին - Ա. Մ.] ընդունվեց, քանի որ այն ոչ մի քաղաքական հիմք չէր տալիս նախկին առարկությունների [Ֆրանսիայի և Անգլիայի առարկությունների - Ա. Մ.] համար և ամբողջությամբ հիմնավորված էր միջազգային իրավունքի տեսակետից»:¹⁴ Դաշնակիցներին դուր չէր գալիս անգամ այն համաձայնաբքը, որ Ռուսաստանը անվերապահ վստահություն ունի հայերի շրջանում, և նրանք ջանում էին ձախողել Ռուսաստանի այն բոլոր քայլերը, որոնց հետևանքով Ռուսաստանի հեղինակությունը հայերի շրջանում կկրկնապատկվեր: Ավելին՝ դաշնակիցներն անընդհատ պահանջում էին, որ Ռուսաստանն իր միջոցները և ուշադրությունը դարձնի միայն Արևմտյան ճակատին, իսկ Կովկասյանը մղի հետին պլան, այն դեպքում, երբ հենց

Կովկասյան ճակատում էր վճռվում հայ ժողովրդի ճակատագիրն ու ապագան: Ռուսաստանն անընդհատ գտնվում էր դիվանագիական ճնշման տակ և քանի որ, բացի դրանից, ուներ մակ տնտեսական կախում դաշնակիցներից. (վերջիններս էին վարկեր, զինամթերք ու այլ անհրաժեշտ նյութական միջոցներ տրամադրում պատերազմ վարելու համար) Ռուսաստանը հաճախ կատարում էր քայլեր այդ ճնշման տակ, որոնք երբեմն հակասում էին անգամ իր պետական շահերին: «Ռուսաստանը, որ երբեք ուժերով զբաղված էր արևմտյան թատերաբեղում Ավստրո-Գերմանիայի դեմ մղվող պայքարով, չկարողացավ մեծ ուժեր առանձնացնել ընդդեմ թուրքերի, ուստի և հարկադրված էր մղել պաշտպանական պատերազմը: Թուրքերը օգտվեցին ստեղծված իրադրությունից ամբողջ ծավալով՝ կատարելով հայերի ցեղասպանությունը»: ¹⁵ Միայն այստեղ է, որ առաջ է քաշվում «Կովկասյան ճակատը երկրորդական է» դրույթը, սրանից բխող բոլոր ծանր հետևանքներով: Դաշնակիցների ճնշման տակ Ռուսաստանը ևս ստիպված էր անուշադրության մատնել Կովկասյան ճակատը և, հետևաբար, նաև հայերի ապագան: Կովկասյան ճակատում միակ նպատակը ամեն զեղում Կովկասյան ճակատում ռուսական կառավարությանն էր: Տվյալ դեպքում Կովկասյան ճակատում ռուսական կառավարությանն էր նշված խնդիրը, որը նախօրոք մշակված և վերը նշված դոկտրինի գերնպատակն էր, առաջնային էր ևստվել, քան արևմտահայերի ապագան: Միայն այս «երկրորդականությանը» պետք է բացատրել ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության այն բոլոր մերժելի քայլերը, որոնք անդրադառնում էին ոչ միայն ռազմական գործողությունների, այլև, անմիջականորեն, արևմտահայության ֆիզիկական գոյի վրա:

Պայմանականորեն դրույթների այս համակարգն անվանենք «օտար ուժի ազդեցության» տեսություն, քանզի դրույթների այս համակարգը չի կարող նեղառնվել «չարյաց փոքրագույնի» տեսության մեջ այն պատճառով, որ Ռուսաստանը երբեմն ոչ իր կամքով քայլեր էր կատարում վերջին հաշվով ի վնաս իր իսկ շահերի: Տվյալ դեպքում տուժում էին թե՛ Ռուսաստանի և թե՛ հայ ժողովրդի շահերն ի օգուտ այն «օտար ուժի», որի թելադրանքով էլ կատարվել է տվյալ քայլը:

Ակամայից հարց է ծագում, արդյո՞ք ռուսական կառավարությունը մշակել էր հատուկ կոնցեպցիա Հայկական հարցի լուծման համար և հետևողականորեն իրականացնում էր այդ կոնցեպցիայի դրույթները, թե՞ Ռուսաստանի կատարած քայլերն այս ուղղությամբ կրում էին սխտուացիոն (պահի ազդեցության տակ կատարված) բնույթ: Այս հարցին, մեր կարծիքով, միանշանակ պատասխան տալ չի կարելի, քանզի տարբեր փուլերում փաստերը մեզ տարբեր, երբեմն հակասական կարծիքների են հանգեցնում: Այս հարցում ելակետը պետք է լինի հետևյալը. Ռուսաստանը Հայկական հարցի վրա կոնկրետ ժամանակաշրջանում իր ուշադրությունը սևեռել է այնքանով, որքանով դա հրատապ է եղել իր համար և թխել է իր պետական-ազգային շահերից: Իրոք՝ մինչև պատերազմի սկիզբը Արևմտյան Հայաստանը Թուրքիայի կազմում էր և այնտեղ պետք էր ազդեցություն տարածել, ու 1914թ. հունվարի 26-ին մշակվեց ու հետևողականորեն իրագործվեց բարեփոխումների ծրագիրը. դրանից հետո սկսվելիք պատերազմում անհրաժեշտ էր հայերին որպես դաշնակից ունենալ ընդդեմ Թուրքիայի, և Ռուսաստանը Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի շուրթերով հայերին խոստացավ Արևմտյան Հայաստանի ինքնավարու-

թյուն պատերազմի հաղթական ավարտից հետո, պայմանով, որ հայերը կազմեն կամավորական ջոկատներ և կռվեն ռուսական բանակի հետ ընդդեմ հայերին հալածող Թուրքիայի, որին հաղթելու դեպքում միայն Ռուսաստանը կարող էր կատարել իր խոստումը:

Ռուսաստանի կատարած քայլերը հետևողական էին ընդհուպ մինչև 1915թ. վերջը, երբ ռուսական բանակը սկսեց գրավել Արևմտյան Հայաստանի տարածքները: Ինչպես հայտնի է, հենց Ռուսաստանի նախաձեռնությամբ և դիվանագիտական համառությամբ Անտանտի պետությունները 1915թ. մայիսի 24-ի իրենց համատեղ հայտարարությամբ դատապարտեցին հայերի ցեղասպանությունը: Իսկ 1916թ. ռուսական զորքերը գրավել էին Արևմտյան Հայաստանի մեծագույն մասը: Այս ժամանակ էր, որ առաջ եկավ փախստականների վերադարձի և սրանից հետևող՝ Արևմտյան Հայաստանի ինքնավարության հիմնահարցը, որն արդեն «գլխացավանք» դարձավ Ռուսաստանի համար: Ուստի կարելի է ասել, որ 1916թ. սկզբից ի վեր Ռուսաստանի քաղաքականության մեջ հայերի նկատմամբ սկսեցին նկատվել տատանումներ: Այս հանգամանքը կարելի է բացատրել նաև նրանով, որ ռուսական կառավարությունն արդեն իսկ հասել էր պատերազմի սկզբում իր առջև դրված խնդրի լուծմանը՝ հայ ժողովուրդն արդեն պատերազմի մեջ էր ռուսների կողմից, ստեղծել էին կամավորական ջոկատներ, հետդարձի ճանապարհ այլևս չկար: Այս պահից սկսած Ռուսաստանի քաղաքականության մեջ նկատվում են իրարամերձ՝ երբեմն հայամպաստ, երբեմն հակահայկական կողմնորոշումներ: Յուրատեսակ պայքար էր ընթանում Ռուսաստանի կառավարող շրջաններում Հայկական հարցի և հայ ժողովրդի ճակատագրի շուրջ: Մի բան ակնհայտ է, որ եթե անգամ Ռուսաստանի կառավարությունը ուներ մշակած կոնցեպցիա Հայկական հարցի շուրջ, ապա դա ընդամենը մի փոքր մանրամասն էր «Բոսֆոր-Դարդանեղ-Կոստանդնուպոլսի» բաղձալի դոկտրինի մեջ, այսինքն Հայկական հարցի լուծումը դիտարկում էր լոկ որպես միջոց նշված գերնպատակին հասնելու համար և հնարավոր էր, որ հանուն դրա Հայկական հարցը զոհաբերվեր: Ահա այս դրույթից է բխում դատողությունների մի նոր համակարգ, որը կրկին պայմանականորեն անվանենք *«հայանպաստ և հակահայկական հոսանքների պայքարի»* հայացակետ:

Մի հետաքրքիր հանգամանք՝ եթե հայանպաստ հոսանքը պայքարում էր հարաբերականորեն արդար, անգամ՝ միամիտ մեթոդներով, ապա հակահայկական հոսանքը կանգ չէր առնում կեղծիքի և հերյուրանքների առաջ: Այս դեպքում անբարենպաստ դեր էր խաղում ներքին գործերի նախարարությունը և նրա գործակալները՝ Կովկասում: Գաղտնի ոստիկանության ղեկավարները հմուտ կերպով օգտագործում էին առանձին պետական այրերի միջև եղած բախումները և բարդ հարաբերությունները: Քծնելով բարձրագույն իշխանության առաջ, նրանք պատրաստ էին սևացնել ոչ միայն այն ռուս պետական գործիչներին, որոնք քիչ թե շատ մեղմ քաղաքականություն էին վարում Կովկասում, մասնավորապես, կամավորական շարժման նկատմամբ, այլև ողջ հայ ժողովրդին: Ներքին գործերի նախարարության գործակալները կանգ չէին առնում ոչնչի առաջ, որպեսզի վարկաբեկեն Վորոնցով-Դաշկովին, որի դեմ էին միավորվել պետական քարտուղար Ստոլիպինը, ռազմական նախարար Մուխոմլինսկին, գլխավոր շտաբի ղեկավար Յանուշկեվիչը:¹⁶ Գործակալները Պետրոգրադ էին ներկայացնում խեղաթյուրված նյութեր հայ կամավորական ջո-

կատների մասին: ¹⁷ Թեև՝ նույնիսկ Վորոնցով-Դաշկովի հայասիրությունը պետք է համարել հարևաբերական, քանզի ցանկացած ռուսական պաշտոնյա հայասեր էր այնքանով, որքանով այդ հայասիրությունը բխում էր Ռուսաստանի շահերից՝ ընդհանրապես, կամ տվյալ պաշտոնյայի անձնական շահերից՝ մասնավորապես: Այս վերջին դատողությունները վերաբերում են նաև հայասերի համրավ ստեղծած, կաղեխակալ կուտակության լիդեր Պավել Միլոկովին: Միլոկովը և նրա գաղափարակիցները օգտագործում էին կառավարության սխալներն ու բացթողումները Հայկական հարցում, որպեսզի հարված հասցնեն իրենց հակառակորդներին: Եթե 1914-1916 թթ. Միլոկովն ասում էր մի բան, ապա 1917 թվականին, Ժամանակավոր կառավարության արտաքին գործերի նախարարի պաշտոնում, ասում էր լրիվ այլ բան: ¹⁸

Ոստիկանության դեպարտամենտն իր բոլոր պրովոկացիոն նյութերն ընդհանրացրած տեսքով և համապատասխան եզրակացություններով ներկայացնում էր ոչ միայն Նիկոլայ II-ին, այլև Գլխավոր շտաբ, ի գիտություն և ի կողմնորոշում: Բարձրագույն հրամանատարությունը ոստիկանության և ի դեպարտամենտի այդ հաղորդումներն ընդունում էր որպես բացարձակ ճշմարտություն և շատ հաճախ դրանց հիման վրա էր որոշում իր վերաբերմունքը հայ կամավորական ջոկատների նկատմամբ: ¹⁹ Նշենք նաև, որ ապակողմնորոշող նմանատիպ գործունեությանը զբաղվում էին ոչ միայն ներքին գործերի նախարարության գործակալները, այլև որոշ զինվորական պաշտոնյաներ: Կամավորական ջոկատների նկատմամբ թշնամաբար տրամադրված առանձին գեներալներ, որոնցով վարկաբեկում էին նրանց բարձրագույն հրամանատարության աչքերում: Նշենք նաև, որ այն զնահատականները, որոնք տրվում էին կամավորական ջոկատներին զինմանավորումների հրամանատարների կողմից կտրուկ տարբերվում էին ներքին գործերի նախարարության, զինվորական չինովնիկների զնահատականներից: ²⁰ Դրան հակակշիռ՝ հայամետ հոսանքը ավելի քան համեստ էր ու գուսա: Տվյալ պարագայում հայամետ հոսանքի գործիչները պարտավոր էին ապացուցել ցարին և նրա շրջապատին, որ հայերին կարելի է և պետք է վստահել Արևմտյան Հայաստանը, որ Բուլղարիայի օրինակը Արևմտյան Հայաստանում չի կրկնվի, որ հայերին պետք է դիտել որպես փոքր դաշնակից Ռուսաստանի Արևելյան քաղաքականության մեջ՝ ընդհանրապես և «Բոսֆոր-Դարդանեղ-Կոստանդնուպոլիս» դուկարիների իրագործման հարցում՝ մասնավորապես: Հարկավոր էր ցարին և նրա շրջապատին համոզիչ փաստարկներով բացատրել, որ Արևմտյան Հայաստանին ինքնավարության դեպքում Արևմտյան Հայաստանը շարունակում է մնալ Բոսֆոր-Դարդանեղ և Կոստանդնուպոլիսը Ռուսաստանի կապող վստահելի ցամաքային օղակ, և բոլորովին պետք չէ դրա համար այստեղ կազակներ վերաբնակեցնել: Հայամետ հոսանքի գործիչները, սակայն, փորձում էին լոկ խղճահարություն հարուցել, մատնանշելով հայ ժողովրդի կորուստները, և դրանից ելնելով խնդրում էին նրան շնորհել, նվիրել Արևմտյան Հայաստանը, իսկ ցարը և շրջապատը ընդամենը բառերով էին ափսոսանք հայտնում հայ ժողովրդի դժբախտության կապակցությամբ: Դա բնական է՝ խղճահարությամբ տարածքներ չեն շնորհվում, անգամ եթե այդ տարածքը որևէ ազգի պատմական հայրենիքն է: Տվյալ դեպքում միակ ճիշտ ելակետը պետք է լիներ հայ ժողովրդի երազանքը Ռուսաստանի պետական

շահերի շրջանակներում ներկայացնելը, հայ ժողովրդի և Ռուսաստանի շահերի համընկնելու պահը ցույց տալը, որը չարվեց:

Բացի դա, Ռուսաստանում վատ էր կազմակերպված Հայկական հարցի՝ ռուսալեզու պրոպագանդան. ըստ էության այդ հարցով զբաղվում էին լոկ երկու պարբերական, փոխարենը տպագրվում էին որքան ասես հակահայկական հոդվածներ: Այս պայմաններում հայերի և Հայկական հարցի վերաբերյալ դրական հասարակական կարծիք դժվար էր ձևավորվել:

Հայամետ և հակահայկական հոսանքների պայքարում ակնհայտ առավելություն ունեւր հակահայկական հոսանքը և ըստ այդմ էլ կառուցվում էր Ռուսաստանի քաղաքականությունը Հայկական հարցում: Այսպես՝ 1916թ. աշմանը Ռուսաստանի կառավարությունը Պատերազմի իրավունքով գրաված տարածների կոմիսարի շուրթերով հայտարարեց, որ Արևմտյան Հայաստանում Ռուսաստանն առաջնորդվելու է բոլոր ազգերի իրավահավասարության սկզբունքով, որ բոլոր ազգերը հավասար են Ռուսաստանի համար:²¹ Փաստորեն իրար էին հավասարեցվում Ռուսաստանի հետ կողք կողքի կոված և արյուն թափած հայ ժողովուրդը և Հայոց ցեղասպանության «գործիք» դարձած քրդերը, որոնք, ի դեպ, բազմիցս թիկունքից հարվածներ էին հասցրել հենց աուսական բանակին: Այս հայտարարությունը կատարելիս Ռուսաստանի բարձրաստիճան չինովնիկը բնավ էլ մտահոգված չէր տարբեր ազգերի իրավունքների հավասարությամբ. խնդիրը Արևմտյան Հայաստանում տարբեր ազգերի միջև ուժերի հավասարակշռության պահպանության մտադրությունն էր: Ռուսաստանում գիտակցում էին, որ Արևմտյան Հայաստանում հայերն աստիճանաբար հզորանում են. այդ հզորության մասին էին վկայում կամավորական ջոկատների հերոսական մարտերը, Վանի հայկական նահանգապետությունը և այլն: Այս պայմաններում անհրաժեշտ էր հակակշիռ ստեղծել հայերին, ի դեմս քրդերի: Որպես օրինակ կարելի է բերել Անդրանիկի կողմից ձերբակալված քուրդ բեկերի ազատ արձակումը ռուսական իրամանատարության կողմից, չնայած այն բանի, որ Անդրանիկը բազմիցս շեշտում էր, որ այդ բեկերը կազմակերպել են ոչ միայն հայերի ջարդերը, այլև հարվածել են բուն ռուսական ուժերի թիկունքից: Բնականաբար այդ բողոքներին ոչ մի ուշադրություն չդարձրին, բանի որ այդ քայլով ինչպես ասեցինք, իրականացվում էր ուժերի հավասարակշռության ապահովման ծրագիրը Արևմտյան Հայաստանում: Բնական է, որ խրարուսելով քրդերին Ռուսաստանը դրանով, ինքնըստինքյան, հարվածում էր հայերին: Որքան շատ էր ռուսական բանակը առաջանում հայկական վիւլայեթների խորքերը, այնքան ավելի ընդգծված էր դառնում ցարական այդօրինակ քաղաքականությունը: Վորոնցով-Դաշկովը ժպտում էր հայ ազգային ներկայացուցիչներին, սիրալիր ճանապարհում նրանց իր աշխատասենյակի դռան մոտ, և նույն ժպիտով մյուս դռնից դիմավորում էր քրդական ղեկավարներին:²² Ահա՛ առաջ է գալիս դրոյթների մի նոր համակարգ, որը կրկին պայմանականորեն անվանենք *«ուժերի հավասարակշռության պահպանման»* հայացակետ: Այս երկդիմի քաղաքականության նպատակը Արևմտյան Հայաստանում հարաբերական անդորրի, հավասարակշռված կայունության պահպանումն էր՝ Ռուսաստանի հետագա ծավալման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով:

Բացի այդ՝ հայերի իրավունքների պակասեցման հաշվին (խոսքը, մասնավորապես, վերաբերում է հայերի զինաթափմանը և քրդերի՝ զենքե-

ո՞ր պահպանմանը քրդերին առավել մեծ արտոնություններ տալու միջոցով Ռուսաստանը, փաստորեն, «պատժիչ միջոցառումներ» էր կիրառում հայերի հանդեպ, երբ նրանք, ռուսների կարծիքով, «սխալ քայլեր» էին կատարում: Որպես հայերի կողմից գործած «սխալ քայլեր» Ռուսաստանում դիրքում էին, օրինակ, Պողոս Նուբար փառալուստի առաքելությունը Եվրոպայում, որը նշխարական ուներ Հայկական հարցի լուծման մեջ ներքաշել Ռուսաստանի դաշնակիցներին՝ Անգլիային և Ֆրանսիային, ինչը ձեռնադրու էր Ռուսաստանին, քանզի վերջինս արդեն Հայկական հարցում մենաշնորհ էր ձեռք բերել 1914թ. հունվարի 26-ի Ռուս-թուրքական համաձայնագրի բախտի խախտման դրագրով:

Հայերի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու մասին հստակ պատկերացում է տալիս հետևյալ փաստը: Կովկասյան փոխարքայի գործակալության հատուկ բաժնի վարիչը՝ Պիտարևսկին կովկասյան բանակի դաշտային շտաբին ուղղված 1916թ. ամռանը գրած իր ընդհանուր զեկույցի մեջ գրում է. «Անհանգիստ տրամադրություն է նկատվում, որը ստեղծվել է այն ասեկոսների հետևանքով, որ ռուսական կառավարությունը, իբր թե փոխել է իր տեսակետը հայկական ջոկատների նկատմամբ և նրանց ուղարկում են առաջավոր դիրքեր, իսկ կանոնավոր զորքերը գնում են նրանց հատեհ: Այդ ճանապարհով իբր մտածում են ոչնչացնել կամավոր-օժանդակությունից պատերազմի ավարտից հետո: Ծրագրվում էր ընդհանրապես դադարեցնել կամավորների հավաքագրումը, բայց ասում են, որ դրան դեմ հանդես եկավ Անդրանիկը, որը գտնում էր, որ անհրաժեշտ է կովել ռուսների հետ միասին, քանի որ հակառակ դեպքում ռուսական կառավարությունը կձերբարկալի բոլոր հայ խմբապետներին և կսկսի վրեժ լուծել հայերից»: Վերը նշվածից պարզ երևում է, որ ռուսները մախ տեղյակ էին, որ հայերը զգում են Ռուսաստանի քաղաքականության տատանումները իրենց նկատմամբ, և դա իր հերթին մտահոգում էր ռուսներին: Երկրորդ՝ հայկական շրջաններում արդեն հստակ ձևավորվում էր այն միտքը, որ «խալից դուրս գալ» այլևս հնարավոր չէ, քանզի այդ դեպքում կհետևեն արդեն ուղղակի պատժամիջոցներ, այլ ոչ թե միջոցորդված՝ քրդերի միջոցով:

Հարց է ծագում՝ ինչ քաղաքական գործիչները «սխալ քայլեր կատարել» են Ռուսաստանի նկատմամբ, որի հետևանքով Ռուսաստանը սկսել է փոխել իր քաղաքական կուրսը: Կարելի է համոզված ասել՝ հայերի այսպես կոչված «սխալ քայլերը» ոչ այլ ինչ էին, և՛ թե ոչ Ռուսաստանի քաղաքական կուրսի տատանումների հուսահատ և անհամարձակ այլընտրանքային քայլեր, որոնք Ռուսաստանը դիտում էր որպես «անհամապատասխանություն» և այդ պատրվակով արդարացնում իր քաղաքական զիզագների կուրսը: Ավելին՝ Ռուսաստանի հետ դիվանագիտական առնչություններում հայ քաղաքական գործիչների հիմնական սխալը հենց հաշվեճկատ շրջանայացության բացակայությունն էր: Ինչպես գրում է Տերտերյանը, որն այս դեպքերի մասնակից էր. «Մենք սիրում էինք տեսնել երևույթների միայն բաց կողմերը, ուշադրություն չդարձնելով պատերազմի մութ կողմերի վրա, որոնց մասին հետաքննող մարդիկ դեռ վաղուց էին զգուշացնում մեզ, սակայն որոնց մենք չէինք ցանկանում հավատալ և լսել»: ²⁴ Այս ոչ ճշգրիտ քայլերը, թերևս, կարող են բացատրվել մեկ նրանով, որ հայ քաղաքական գործիչները պակաս ինֆորմացիա ունեին (կամ իսպառ չուներին) Ռուսաստանի

գաղտնի դիվանագիտության և գաղտնի ծրագրերի մասին: Այսուհանդերձ՝ կար անցյալի դառը փորձը (Բեռլինի կոնգրես), երբ փոքր ժողովուրդները ճակատագրական պահերին հաճախ զոհաբերվում են մեծ տերությունների կողմից: Եվ սա պետք է սքափեցնող հանգամանք լիներ հայ գործիչների համար, սակայն, ինչպես երևում է, նրանք լավ չէին սերտել պատմության դառը դասերը, իսկ պատմությունը, տվյալ դեպքում, կրկնվում էր: Ցավոք՝ հայ գործիչները բավականին ուշ նկատեցին «ռուսական տատանումները» և դրանից հետո միայն փորձեցին գտնել «այլընտրանքային ճանապարհներ», որն էլ, ինչպես նշեցինք, անմիջապես հանգեցնում էր Ռուսաստանի պատժամիջոցներին:

Հայ քաղաքական գործիչների սխալները սկսվեցին ամենակզբից, երբ «գործարք» էր կայանում Ռուսաստանի և հայ քաղաքական գործիչների միջև: Հայերը պարտավորվեցին կազմել կամավորական ջոկատներ և կոպել Ռուսաստանի կողքին ընդդեմ Թուրքիայի, իսկ փոխարենը Ռուսաստանը խոստացավ Արևմտյան Հայաստանին տալ հինգամվարություն պատերազմի հաղթական ավարտից հետո: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Ռուսաստանի խոստումը (այլ ոչ թե պարտավորությունը) հեռանկարային էր, անառարկայական, իսկ հայերի պարտավորությունը բավականին հստակ էր, կոնկրետ և ամհապաղ: Ահա այս պարագայում հայ գործիչները, ելնելով անցյալի դառը փորձից, պարզապես պարտավոր էին ամրագրել իրենց և Ռուսաստանի պետության պարտավորությունները պայմանագրի, համաձայնագրի կամ այլ ձևով, որպեսզի, թեկուզ պատերազմի ավարտին, Ռուսաստանին պահանջներ ներկայացնելու ժամանակ ձեռքի տակ ունենային փաստաթուղթ, որը կպարտավորեցներ Ռուսաստանին կատարել իր խոստումները: Այս քայլը չկատարվեց, և պարզ է, որ միջազգային իրավունքի տեսակետից Ռուսաստանը ոչնչով պարտավորված չէր հայերի հանդեպ:

Հայ գործիչները հաշվի չառան մի քանի կարևոր գործոններ, որոնք կարելի էր օգտագործել որպես լծակ՝ համաձայնագիրը ստորագրելու համար: Ցարական կառավարության կողմից կատարվող հապճեպ միջոցառումները՝ հայ կամավորական շարժման կազմակերպման ուղղությամբ, թելադրվում էին շատ կարևոր արտաքին ազդակով: Ըստ էության՝ սա Ռուսաստանի կողմից պատասխան ռեակցիան էր Էմվերի և Թալեաթի իշխանական կլանի կողմից նախատեսված և իրական ձևեր ընդունող՝ Անդրկովկասի գրավման ծրագրին և այդ ծրագրում արխագական, վրացական, ադրբեջանական ֆեոդալական վերնախավին ներգրավելու խնդրին: Իր բանակի ռազմական գործողությունների թեթևացնելու նպատակով Ռուսաստանի դեմ ապստամբության կազմակերպման գործում թուրքական կառավարությունը տեղ էր հատկացնում մաս հայերին, կարծելով, որ նրանք կմասնակցեն ծրագրված գործողություններին:²⁵ Ահա այստեղ հայ գործիչները շտապեցին կտրուկ բացասական պատասխան տալով թուրքերին, իրենց զրկելով «թուրքական այլընտրանքի» և արխագների, վրացիների ու ադրբեջանցիների «անհավատարմության» խաղաքարտերը օգտագործելու հնարավորությունից, որը, միանշանակ, կազդեր Ռուսաստանի վրա, առավել ևս պատերազմից առաջ, երբ ցանկացած փոքր օգնություն մեծ արժեք է ձեռք բերում: Հայերն իրենց օգնությունը պարզապես մվիրեցին ռուսներին, և այս պարագայում Ռուսաստանը ոչ մի մեղք չունի, նա ուղակի օգտվեց հայերի անփութությունից: Կար մաս մի այլ կարևոր խա-

դարձրեց: Հայերը կարող էին ընդհանրապես խաղարկել «չեզոքության» վարկածը, որը մույնպես կազդեր Ռուսաստանի վրա, քանի որ «ցարական կառավարությունը վախենում էր Անդրկովկասում ազգային-ազատագրական շարժման պայթյունից, դեմ էր, որ հայ կամավորական ջոկատները ձեռնարկեին ինչ-որ ինքնուրույն քայլեր արևմտահայերի հարցում»: ²⁶

Ֆրանսիայում Ռուսաստանի դեսպան Իգլոյսկին դեռևս 1913թ. փետրվարի 28-ին Արտաքին գործոց նախարար Մազոնովին տեղեկացնում էր, որ Պողոս Նուբար փաշան իրեն հավաստիացրել է, որ թուրքահայերը բացարձակապես չեն ցանկանում ինքնավարության հարց բարձրացնել կամ փոխել իրենց քաղաքացիությունը (հպատակությունը), նրանք ցանկանում են հասնել քարեփոխումների իրագործման: Ընդ որում, հայերը հույս են կապում Ռուսաստանի հզոր օժանդակության հետ և մտադիր են ամեն ինչում հետևել ռուսական կառավարության հրահանգներին: ²⁷ Եթե 1913թ. այս մտեցումը իրեն արդարացնում էր, որի հետևանքով եղավ 1914թ. հունվարի 26-ի քարեփոխումների ծրագիրը, ապա պատերազմից առաջ և ընթացքում այլևս չէր կարելի առաջնորդվել այդ մույն մարտավարությամբ: Ցավոք՝ հայկական դիվանագիտությունը Հայկական հարցում իր մեթոդների բազմազանության տեսակետից առաջընթաց և էվոյուցիա չունեցավ: Այս բոլոր սխալները, կարծում ենք, հետևանք են նրա, որ եայ գործիչները քաղաքականության մեջ հաճախ առաջնորդվել են ոչ թե ստույգ քաղաքական հաշվարկներով, այլ զգացմունքայնությամբ:

Ամփոփելով վերջաբարդրվածը, հարկ ենք համարում նշել մի հանգամանք: Մեծ եղեռնի տարիներին մեծ տերությունների քաղաքականության հիմնահարցը քննարկելու ժամանակ, մեր կարծիքով, չափազանց կարևոր է գերծ մնալ ֆրագմենտարությունից, միանշանակ գնահատականներից և փաստերը ներկայացնել համակողմանիորեն ու ամբողջությամբ: Այս իմաստով, կարծում ենք, ոչ թե առանձին փաստերը պետք է ընտրվեն ի սկզբանե կամխորոշված այս կամ այն հայեցակետը հաստատելու համար, այլ հարկ է, գերծ մնալով նախապաշարումներից, փաստերի ամբողջականությունը ուսումնասիրելուց և այդ փաստերը վերլուծելուց հետո միայն փորձել ձևավորել հարցի վերաբերյալ օբյեկտիվ հայեցակետ: Մասնավորապես՝ Ռուսաստանի քաղաքականությունը Հայոց ցեղասպանության տարիներին ունեցել է բազմաթիվ զիզզազներ և տատանումներ և, կարծում ենք, ճիշտ չի լինի վերցնել առանձին փաստեր ու փորձել դրանց պրիզմայով լուսաբանել այդ գերտերության ողջ քաղաքականությունը: Անհրաժեշտ է ցուցաբերել համապարփակ գիտական մոտեցում, հաշվի առնել փաստերի ամբողջականությունը, անգամ եթե դրանք հակասական են: Նման մոտեցումը թույլ կտա խնդրո առարկա ժամանակաշրջանում տարբեր պետությունների քաղաքականության գիտական գնահատականը առավել մոտեցնել իրական պատկերին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Барсегов Ю. Г. "Геноцид армян — преступление против человечества", Ер., 1990, стр. 18.
² Նույն տեղում, էջ 19:
³ Եսայան Ա. «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը», Եր., 1965, էջ 78:
⁴ Տե՛ս մույն տեղում, էջ 83:

- ⁵ Տե՛ս Григорян В. "Армения и Турция. Как быть дальше?" Ер. 1998, стр. 20.
- ⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 22:
- ⁷ Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և Խորհրդային արտաքին քաղաքական փաստաթղթերում» Ջ. Կիրակոսյանի խմբ., Եր., 1972, էջ 349-350:
- ⁸ Արզումանյան Մ. «Հայաստան 1914-1917», Եր., 1969, էջ 243:
- ⁹ Մաայան Ա. «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը», Եր., 1965, էջ 78:
- ¹⁰ Киракосян Дж. "Западная Армения в годы Первой мировой войны", Ер., 1971, стр. 412.
- ¹¹ Նույն տեղում, էջ 415:
- ¹² Արզումանյան Մ. «Հայաստան 1914-1917», Եր., 1969, էջ 270:
- ¹³ Киракосян Дж. "Западная Армения в годы Первой мировой войны", Ер., 1971, стр. 418.
- ¹⁴ Барсегов Ю. Г. "Геноцид армян-преступление против человечества", Ер., 1990, стр. 2.
- ¹⁵ Տե՛ս Մաայան Ա. «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը», Եր., 1965թ., էջ 89:
- ¹⁶ Арутюнян А. О. "Кавказский фронт 1914-1917гг.", Ер., 1971, стр. 316.
- ¹⁷ Նույն տեղում:
- ¹⁸ Նույն տեղում, էջ 366:
- ¹⁹ Նույն տեղում, էջ 316:
- ²⁰ Арутюнян А. О. "Кавказский фронт 1914-1917", Ер., 1971, стр. 319.
- ²¹ Տե՛ս Киракосян Дж. "Западная Армения...", стр. 414:
- ²² Նույն տեղում, էջ 415:
- ²³ Арутюнян А. О. "Кавказский фронт...", стр. 314.
- ²⁴ Киракосян Дж. "Западная Армения...", стр. 207.
- ²⁵ Киракосян Дж. "Западная Армения...", стр. 207.
- ²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 208:
- ²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 136:

Резюме

Геноцид армян в политике России.
Концепции и реальность.

Армен Марукян

В советской историографии относительно этого вопроса были определены стереотипные подходы. В начале политика России не только в вопросе геноцида армян, но и в Армянском вопросе вообще оценивалась как "абсолютное добро", так как Россия считалась освободительницей малых народов, в частности - армянского народа, гнетущихся под игом Турции.

Впоследствии этот подход пересмотрелся, и под идеологическим влиянием политику России начали рассматривать как "абсолютное зло", впадая в другую крайность. В последнее время в обращение вошла новая точка зрения, согласно которой русская политика в отношении армянского народа считалась "наименьшим из зол" в годы геноцида армян. Эта позиция выдвигалась, сравнивая политику России и других великих держав в Армянском вопросе.

Уже в наше время к этому вопросу начали подходить более объективнее, освободившись от идеологических и политических стереотипов. Была выдвинута точка зрения совпадения интересов России и армянского народа, согласно которой стремления и чаяния армян совпадали с политическими целями и интересами России в годы геноцида армян, поэтому Россия в эти годы в большинстве своем вела проармянскую политику.

Политика России во время геноцида армян в 1915-1916 гг. не была однозначна, она имела колебания и зигзаги. Это объяснялось политической борьбой двух противостоящих течений в правительстве России: армянофильской и армянофобской. Политика России определялась в зависимости от того, какое из этих течений одерживало победу в определенном историческом отрезке времени.

Summary

The Armenian Genocide in Policy of Russia. Conceptions and Reality.

Armen Maroukian

The Soviet historiography had stereotip approaches to Armenian question and Armenian genocide. In the beginning policy of Russia not only in Armenian genocide, but also in Armenian question was priced as "absolute good", because Russia was regarded the saver of small peoples and particulary Armenian people from Turkish domination.

Subsequently this approach was revised under the ideological influence and was priced as "absolut evil". That was the other extremity.

At last time it was in circulation the other opinion, according to which Russian policy to armenian people was pricing as "the smallest evil" during armenian genocide years. This position was followed comparing the policy of Russia with policy of other great powers in Armenian question.

In our time these questions are escape from ideological and political stereotips. According to new opinion, which is more objective than the others ones, the interests of Russia were conceded with aspirations of armenian people, therefore Russia had driven great partly proarmenian policy.

The policy of Russia during the Armenian genocide in 1915-1916 was not simple, it had many ascillations and zigzags. It was explained of political fighting of two tendencies in russion government: proarmenian and antiarmenian. The policy of Russia was depended on victory of one of these tendencies in the definite historical time.